ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2014, 67, № 2-3, 83-84

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

ԱԼՈՅԱՆ ՊԵՏՐՈՍ ԳԵՎՈՐԳԻ
(1937 – 2014)

2014թ. հունիսի 18-ին կյանքից անսպասելի հեռացավ ճանաչված երկրաբան, գործունյա, շրջապատի հանդեպ մեծ բարյացկամությամբ լի, կենսուրախ անձնավորություն, Բնական գիտությունների և ճարտարագիտական ակադեմիայի ակադեմիկոս, ԽՍՀՄ և Հայաստանի Հանրապետության Պետական մրցանակների դափնեկիր, երկրաբ.-հանքաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ***Պետրոս Գևորգի Ալոյանը:***

Պ.Ալոյանը ծնվել է 1937թ. օգոստոսի 28-ին, Երևանում, ծառայողի ընտանիքում: Հետևելով ավագ եղբոր՝ Ստեփան Ալոյանի օրինակին, նա ընտրում է երկրաբանի մասնագիտությունը և 1956թ. ընդունվում Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը, որն ավարտում է 1961թ., ստանալով "Ճարտարագետ-երկրաբան հետախույզի" որակավորում: Պ.Ալոյանն աշխատանքային գործունեությունը սկսել է Երևանի Լեռնամետալուրգիական գիտահետազոտական ինստիտուտում:

1965-1968թթ. սովորել է Մոսկվայի Շմիդտի անվան "Երկրի Ֆիզիկայի ինստիտուտի" ասպիրանտուրայում, նշանավոր երկրաբան, ԽՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Վ.Վ. Բելոուսովի ղեկավարությամբ: Ավարտելով ասպիրանտուրան, աշխատանքի է անցել Գյումրիի (Լենինականի) Գեոֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտում, իսկ այնուհետև տեղափոխվել է Երևանի Լեռնամետալուրգիական գիտահետազոտական ինստիտուտ, զբաղեցնելով գիտաշխատողի, ավագ գիտաշխատողի, 1976թ.-ից երկրաբանական լաբորատորիայի վարիչի, իսկ 1993 – 1996թթ. ինստիտուտի գիտության գծով փոխտնօրենի պաշտոնները: 2008թ.-ից մինչ կյանքի վերջը Պ.Ալոյանը եղել է "Գեոիդ" ՍՊԸ հիմնադիր տնօրեն և "Ընդերքի պահպանության կենտրոնի" նախագահ:

1974թ. նա հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը, ստանալով երկրաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և զբաղվում երկրատեկտոնիկայի ու սեյսմաբանության հարցերով: Նրա "Հայաստանի լեռնահանքային շրջանների երկրաբանությունը և գունավոր ու ազնիվ մետաղների հանքավայրերի յուրացման արդյունավետության բարձրացման ֆորմացիոն-տեխնոլոգիական սկզբունքները" դոկտորական ատենախոսությունը (1999թ.) նվիրված էր հանրապետության

հանքային հումքի և և նրա յուրացման արդի խնդիրներին:

Պ.Ալոյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները շատ լայն ու բազմակողմանի էին: Նրան, բացի գիտական արժեքներից, բնորոշ էին պրակտիկ հարցերի լուծման նպատակաուղղվածությունը, Հայաստանի և ԼՂՀ ընդերքի հանքային հարստությունների ընդլայնման ծրագրերին և դրանց արդյունավետ, համալիր և բարեխիղճ շահագործման քաղաքականությանը հետամուտ լինելու մոտեցումները:

Այդ աշխատանքները ներառում են հանքային հումքի, նրա տեխնոլոգիական վերամշակման ուսումնասիրության, հանքավայրերի գնահատման և վերագնահատման, պաշարների հաշվարկման, հանքավայրերի և հանքաքարերի արդյունաբերական տեսակավորման, հումքի և տեխնոլոգիական վերամշակման համալիր օգտագործման հարցեր: Այդ աշխատանքներն արժանիորեն արժանացել են ԽՍՀՄ (1989թ.) և ՀՀ (2003թ.) Պետական մրցանակների:

Ծավալուն գիտահետազոտական աշխատանքները Պ.Ալոյանը համատեղում էր երիտասարդ կադրերի պատրաստման հետ, դասավանդելով ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետում և նախագահելով ֆակուլտետի պետական քննությունների հանձնաժողովը:

Վերջին տարիներին "Գեոիդ" ընկերության տնօրենի պաշտոնում Պ.Ալոյանը, բացի հետազոտական գործունեությունը, կարևորում էր նաև հայ երկրաբանների գիտական մենագրական աշխատությունների հրատարակումը, ինչին նա մեծապես նպաստում էր իր կազմակերպչական և գիտական օժտվածության շնորհիվ: Պ.Ալոյանը ձեռնամուխ եղավ նաև "Հայաստանի երկրաբանական հանրագիտարան" ծավալուն աշխատությունը հեղինակելուն, որը երիտասարդ երկրաբաններին մեծապես կօժանդակեր իրենց գործունեության ընթացքում:

Պ.Ալոյանը հեղինակ և համահեղինակ է մոտ 120 գիտական հոդվածների, հրատարակված հանրապետական և միջազգային պարբերականներում, այդ թվում՝ 10 մենագրությունների, ինչպես նաև բազմատիվ ձեռագիր աշխատությունների, զեկուցագրերի և առաջարկների, նվիրված Հայաստանի երկրաբանության և հանքային հումքի արդյունավետ օգտագործման ու համալիր մշակման հարցերին:

Պ.Ալոյանի, ճանաչված երկրաբան-գիտնականի, երկրաբանական արտադրության խնդիրների լուծմանն ուղղված ակտիվ կազմակերպչի, արժանի քաղաքացու, նվիրված ընկերոջ, հոգատար ամուսնու և հոր կերպարը ընդմիշտ կմնա իր մտերիմների և բոլոր ճանաչողների հուշերում:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ "Գիտություններ Երկրի մասին" տեղեկագրի
խմբագրություն